# Արձանագրություն N 5

## <<ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/L-3>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք.Երևան

<< 19 >> 01.2026թ.
ժամը 12:00

ՀՀ ՆԳՆ կարիքների համար *թվային էլեկտրոնային գրիչ վահանակով* ձեռքբերման նպատակով հայտարարված **ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/L-3** ծածկագրով ընթացակարգի նիստում արձանագրվեց՝

**Օրակարգ**

1. **Տեղեկություններ ընթացակարգի ընթացքի մասին.**

**ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/L-3** ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով */թվային էլեկտրոնային գրիչ վահանակով CPV 30237431/501/* ընտրված մասնակից ճանաչված **«Յունիփեր» ՍՊԸ-ին 09.01.2026** թվականին ծանուցվել է պայմանագրի նախագիծը և առաջարկվել կնքել այն:

**«Յունիփեր» ՍՊԸ-ն** այն ստանալու օրվանից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր էր ներկայացնել պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները՝ իր կողմից թվային էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված:

«Գնումների մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և որակավորման ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

**«Յունիփեր» ՍՊԸ-ն** սահմանված ժամկետներում չի ներկայացրել պայմանագիրը, պայմանագրի և որակավորման ապահովումները, վերոգրյալից ելնելով վերջինս զրկվել է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

2. **Հանձնաժողովը որոշեց՝**

**ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/L-3** ծածկագրով գնման ընթացակարգը համարվում է չկայացած, քանի որ ընտրված մասնակից **«Յունիփեր» ՍՊԸ-ն** զրկվել է պայմանագիրը ստորագրելու իրավունքից, ուստի հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը գնման ընթացակարգը հայտարարում է չկայացած:

**ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/L-3** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով և առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի 6–րդ կետի բ ենթակետի պահանջներով որոշեց՝ «Յունիփեր» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

**«Յունիփեր» ՍՊԸ-ին** առնչվող փաստաթղթերը կուղարկվեն Լիազոր մարմին՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

*«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը սպարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև* ***10-րդ օրացուցային*** *օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:*

***Ընդունվեց որոշում՝*** *կողմ 3 դեմ 0 :*

Հանձնաժողովի <u>Նախագահ՝</u>

ՀՀ ՆԳՆ Ո ՀՈԳՎ ՀԾՎ ՁՊՎ և ուղեկցող ստորաբաժանումների աշխատանքների իրականացման և համակարգման բաժնի ՀԿՀ ավագ տեսուչ, ոստիկանության փոխգնդապետ Ա. Արշակյան

<u>Հանձնաժողովի անդամներ՝</u>

ՀՀ ՆԳՆ Ո ՀՈԳՎ ՀԾՎ հերթապահ մասի ավագ տեսուչ, ոստիկանության ավագ լեյտենանտ Ս. Ավետիսյան

ՀՀ ՆԳՆ ՏՏևԿՎ համակարգչային ցանցի կառավարման և ՏԱ բաժնի գլխավոր մասնագետ Հ. Մարտիրոսյան

Քարտուղար՝

ՀՀ ՆԳՆ ՏՎ ԳՀ բաժնի գլխավոր մասնագետ Լ. Սահակյան